

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ


Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍՏՄԱՆ

Ե. կու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տօյր
Վեցամսեայ 1,50
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ի

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ծանոցման տողը
20 սանդիւն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԻԹԻՒՆ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Ե Ի

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ

չեմ տրուիր

Մեր ներկայ է. տարեշրջանի երրորդ ամիսն ալ ահա կը լրանայ, բայց բաժնեգրները չեն գար: Կերեւայ թէ մեր յարգոյ բաժնորդները որոշած են իրաւունքի աշխատաւորներուն մեծ-պահքը անպատճառ լուրիւրով անցնել տալ. բայց թող հաճին մտածել թէ Զատիկը մօտ է եւ բացառիկ ծախքերը անհրաժեշտ. իսկ թուղթի, բուլի եւայլնի առօրեայ պահանջը անյետաձգելի:

ՄԵԶ ԳՐՈՂՆԵՐՈՒՆ

Շնորհակալութիւն մեր այն բոլոր համակիրներուն ու բարեկամներուն որոնք ազնուութիւնը կուենենան երբեմն թղթակցութիւններով ու յօդուածներով տեղական եւ ազգային լուրեր հաղորդել մեզ: Բայց երկար գրութիւններ հիւրընկալելու համար իրաւունքի ծաւալը անբաւական ըլլալով, շատ անգամ կը ստիպուինք զանոնք կրճատել կամ բնաւ չը հրատարակել, մանաւանդ տեղական ու անհատական հակառակադասութեանց նուիրուածները:

Թերթիս պարունակութիւնը այլազան ու շահեկան ընելու համար քանի որ մենք երկար գրութիւններ չը հրատարակել հարկադրուած ենք, իրաւունքի ճշմարիտ բարեկամներն ալ դժգոհանալու իրաւունքը չունին, կարծեմ, իրենց նաւակները նոյնութեամբ հրատարակուած չը տեսնելուն համար:

Ուստի այս առթիւ աւելորդ չենք համարեր անգամ մըն ալ յիշեցնել թէ հրատարակութեան համար մեզ զրկուած թղթակցութիւնները կարելի եղածին չափ կարճ պէտք է գրել. նաեւ ասոնք թաքուն կրքի մը յագուրդ տալու նպատակաւ միայն գրուած ըլլալու չեն: Աւելորդ է ըսել թէ թղթակցութիւն մը երկար խորհրդաւորութիւններ պէտք չէ պարունակէ, այլ միայն ճշգրիտ դէպքեր ու լրացուցիչ տեղեկութիւններ:

Այս պայմաններու տակ գրուածները միայն պատրաստ ենք շնորհակալութեամբ հրատարակելու. իսկ միւսները, պէտք է գիտնալ թէ, մոռացութեան զամբիւղը կը նետուին:

ՄԻՈՒԹԻՒՆԸ
ԶՈՐԻԹԻՒՆ Է

«Միացած կուի եւ ներշնչանքի բողոքի մեջ եւ ձեռքս զարկել, ձեռքս զարկել, ձեռքս զարկել»:

Դրօշակ թիւ 2, Ապրիլ 1901

Վերջերս Միութեան շուրջը դարձող թերու դէմ հրատարակութիւնը առիթ կուտան մեր հետեւեալ խորհրդածութեանց:

Նախ գոհութեամբ կարճաճառքները Օսմանցիներու վերջին համաժողովոյ ատեն ազգային յեղափոխական երկու մարմնոց պատկանող պատուիրակներու եւ չէզոք տարրերէ երկու անդամոց համարաշխ գործունէութիւնը. զի այլապէս օտար ներկայացուցիչք պիտի ըսէին հայ պատուիրակացայն՝ զոր ասոնք ըսին անոնց, «Դուք նախ ձեռք չեք համաձայնեցէք եւ յետոյ մեզ հետ»:

Այդ համաձայնութեան մէջ մենք իրաւամբ կը նկատենք նախընծայ օրինակը մեր սիրելի գաղափարին՝ ապագայ մեծ համաձայնութեան, կամ բուն բառովն ըսելով Միութեան. որչափ անախորժ ալ հնչէ այդ բառը կարգ մը անվստահականներու:

Գաղափարը նոր չէ. արդէն քանի մը տարիներէ ի վեր ժողովուրդին մէկ կարեւոր դասակարգը այդպիսի փափաք մը յայտնած էր հիմնուելով փորձառութեան վրայ եւ ինկատի ունենալով արդի յեղափոխական կազմակերպութեանց անբաւարար գործունէութիւնը. իսկ վերջերս Միութեան մասնախումբերու կազմութիւնը ապացոյց մըն է որ ժողովուրդը իր այդ փափաքը իրագործելու առաջին քայլն առած է:

Մեր յեղափոխական այլ եւ այլ մարմնոց կը մնայ ուրեմն գոհացում տալ այդ արդար բաղձանքին. այլապէս ցաւ պիտի զգայինք, եւ գուցէ փորձուէինք մտածել թէ անոնք, որչափ ալ ամեն կասկածէ վեր ըլլայ իրենց անկեղծութիւնը, ազգային տարբեր հանգամանք մը, չըսենք ուղղութիւն մը,

տուած են իրենց գործունէութեան կամ տուած ըլլալու սխալը կը գործեն:

Այսու ամենայնիւ առաջին փորձը որուն վերը ակնարկեցինք, յուսադրական է մեզ համար. հետեւաբար կը սիրենք յուսալ որ վերջնական Միութեան հարցն ալ յաջող ելք մը կունենայ, միայն թէ մի քիչ աւելի զոհողութիւն կամ աւելի ընդարձակ բառովն ըսելով, հայրենասիրութիւն եւ պէտք եղած բարեմտութիւնը ցոյց տրուի թէ մէկ եւ թէ միւս կողմանէ:

Իսկ մենք պարտք կը սեպենք մեզ ամեն առթիւ եւ ամեն տեղ ջանալ Միութեան նպատակը գիտիլը պատրաստել այժմէն, որպէս զի հոն նետուելիք սեղմերը արդիւնաւոր ըլլան եւ բաղձացեալ պտուղը բերեն: Հետեւաբար մեր տկար ձայնովը կոչում կընենք ամեն հայերու, պատկանին անոնք ու եւ յեղափոխական մարմնոյ մը կամ ոչ, բաւական է որ առանց կանխակալ կարծեաց հաճին մեզ ունկնդնել:

Սիրելի հայրենակիցք, Միւսնոյն անագորոյն ձեռքը ստիպեց զձեզ եւ զմեզ թողուլ տուն, տեղ, հայրենիք, ընտանիք լիաթոշակ պաշտօններ, յուսալից ասպարէզ, շահաբեր զբաղում, եւ զալ նժգեհիլ օտար աստղերու տակ օտար հողի վրայ, աշխարհի հեռաւոր մի անկիւն, աննպաստաւոր մի կլիմայի ներքեւ, եւ անդ նորեկ՝ նորատեսակ, անծանօթ միջին եւ իսկ անգործ, կեանք մը վարելու ճգնիլ: Միզմէ առաջ ուրիշ շատեր ալ կատարեցին այդ ակամայ ելքը, անոնք ալ հազարներով գաղթեցին ի Հնաստան եւ այլուր, սակայն ցաւ է ըսել զի չկրցին իրենց ազգային գոյութիւնը պաշտպանել եւ տակաւ առ տակաւ ցուրեցան կամ ցուրեւելու վրայ են տիրող ազգաց հետ:

Արդեօք նոյն տխուր վախճանը պիտի վիճակի եւ մեզ՝ նոր գաղթականներու:

Պատասխանը կըլլայ այո՛ եւ ո՛չ: Այո՛, եթէ մոռնանք մեր անցեալը եւ օտարութեան անձնատուր ըլլանք:

Ո՛չ, եթէ հաւատանք ապա-

գային եւ ազգային կեանքով ապրինք:

Բացատրենք: Այո՛ ըսինք, զի մենք անցեալ մը ունինք, աշխարհիս չափ հին պատմութիւն մը, ուրոյն լեզու, ուրոյն գրականութիւն, ուրոյն եկեղեցի, աշխարհածանօթ նախնիք, բնագաւառ մը որ ցարդ մեր անունը կը կրէ եւ որ մերն էր ժամանակաւ, մեր բուն սեփականութիւնը, մեր քաջերու արիւնովը ցօղուած, որուն ամէն մէկ լեռ, սար, ժայռ, լճակ, գետակ, աղբիւր, ձոր, ձորակ, դաշտ, հովիտ, անտառն ու այգեստանը մեր նախնեաց պաշտելի անուններովն են մկրտուած, եւ սխալի յիշատակներովը նուիրագործուած:

Այդ երբ մոռնանք այս ամէնը, չհետաքրքրուինք հնապատու յորինացիով, քաղցրագոյնիկ Եղիշէով, հայրենապատու Ալիշանով, սրտայոյզ եւ վառվռուն Բաֆֆիով այլովքն հանգստեմ, երբ անտես առնենք եւ արհամարհենք մեր ազգային գոյութիւն հմայիչ, հզօրիչ, շնորհալի, տխրանուշ գրականութիւնը, Կամար-Քաթիպայի «ոլորուն եւ անուշ» երգերը, մեր եկեղեցական հոգեշունչ տաղերը, գանձերը, շարականները, երբ մոռնանք այս ամէնը, ա՛հ այն ատեն օտարութեան անձնատուր եղած կըլլանք:

Իսկ՝ «Օտար երկիրներ տարածուած մեր բիւրաւոր հայրենակիցներու առջեւ եթէ ազատ ասպարէզ թողուի, հայրենիքի մէջ իրենց օրինաւոր կիներ լքանելով օտարութիւններ հետ օտար ծէսով աւանանալու, քանի՜ հարկաւորներ տարագրութեան ճշոււմին տակ շլմորած, բարոյական այդ քստմնեցուցիչ անկումին անձնատուր կըլլան. եւ այն ատեն Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ տարածուող հայ գաղթականներու ապագայ գոյութիւնը ի՛նչ կերպով կարելի կըլլայ պահպանել» (Խըմբագրական իրաւունք լրագրոյ, 27 փետրուար 1902 թիւ 16): Կան խօսքեր որ ազգային տեսակետով ամբողջ վարդապետութիւն մը կը պարունակեն, եւ զոր ստէպ

պէտք է յեղիեղել, այդ կարգէն է նախընթաց հատուածը զոր հարկ համարեցի մէջ բերել թէեւ կարգացիք զայն երեք տասնհազ օրեր առաջ:

— Գանք մեր հարցման երկրորդ պատասխանին:

Ո՛չ, ըսինք. զի յուսալ, միշտ յուսալով, յուսալով ապրիլ և միտնիլ յուսալով, միշտ դէպի լաւը, յաւագոյնը նկրտիլ աշխարհիս օրէնքը, յառաջդիմութեան պայմանն է:

Յուսահատութիւնը ապրելու աւանդական էակներու տրուած է: մեր այսօրուան թշուառ վիճակը պատճառ մը չէ որ համակերպինք անոր անմուռն, ձեռքերնիս ծալլած նստինք կամ հնարը չի փրկողը: այս անտանելի կացութեանն ազատելու. բնականաբար, մտածել աշխատիլ, տքնիլ միջոցներ խորհիլ, ուժեր գոյացնել և վերջապէս կռուիլ, այս պէտք է ըլլայ այժմեան հայ սերունդին գործը, խաչը եթէ կռուէ:

Իսկ թէ ինչպէս կըլլայ ազգային կեանքով ապրիլ. խօսելով, գրելով, գրած տալով, կամ արիւն թափելով:

— Կը պատասխանենք. — Այդ ամէնքով միանգամայն, եթէ կարելի է, ապա թէ ոչ, զատ զատ: Ոմանք պիտի խօսին և գրեն, զի խօսքը գործին թելադրիչը և ներշնչողն է. այլը դրամ պիտի տան. իսկ ոչ սակաւ արիւն պիտի թափեն: Ամենէն գործ կը պահանջուի իր կարողութեան չափովը: Հայրենիքը միշտ երախտապարտ պիտի մնայ ամեն տեսակ գործիչներուն, բայց եւս առաւել անոնց որք զընդ ու սուրով, խօսքով ու դրամով միանգամայն կը սատարեն անոր:

— Ազգային կեանքով ապրիլ կը նշանակէ չի մոռնալ հայրենի օճախը, չի մոռնալ մեր բնագաւառի մէջ հեծեծող հազարաւոր մերկ և անօթի որբերն ու այրիները. ա-

նոնց բաժին հանել մեր հացէն, մեր վայելքներէն: Մեր կանայք թող չունենան աղամանքներ, նուազ ոսկի և արծաթ ունենանք մենք, նուազ հանգստաւէտ տուներ, նուազ փափուկ անկողիններ, նուազ համեղ կերակուրներ: միայն թէ մեր որբերը կշտանան, հագուին ու տաքնան, զի անոնք են ապագայն, իսկ դալով մեր տղոց թող, եթէ հարկ է, հացով և ձիթով պարսկա՛յն հագուին, նուազ նրբացեալ ապրին. սակայն ունենան մէյ մէկ զէնք, և զայն լաւ գործածել գիտնան. այս քլլալ իրենց ամենամեծ բարեմասնութիւնը իբր հայորդի: Իսկ մայրերը անոնց նայելով թող ըսին Քորնէլիայի նման «ահա իմ գոհարեղէններս»:

— Ազգային կեանքով կը նշանակէ նաեւ համերաշխ ապրիլ միմիանց հետ, և Տ. Կ. Թումանյանի բառերով՝ զիրար չանարգել, չհախառնել, չանպատուել, չանուանարկել, չաղտեղել և չփրաւորել: հրապարակային վիճաբանութեանց կամ քննադատութեանց մէջ, «քննադատութիւննիս և վիճաբանութիւննիս իրենց օրինաւոր սահմանին մէջ թող ըլլան, ազնիւ և յարգալից ոճով, բազաքաղաքական կանոնաց համաձայն, յարգելով դիմացինին խօսքը և զգացումը» (Տես Իրաւունք 46 փետրվար 1902 թիւ 13):

— Ազգային կեանքով ապրիլ կը նշանակէ վերջապէս համոզուիլ սա ճշմարտութեան թէ առանց յեղափոխութեան փրկութիւն չկայ. իսկ «յեղափոխական գործին այդպիսի արդիւնաւորութեան մը աւանդէն առաջին և միակ պայմանը Միութիւնն է»: Միութիւն գոյեղող ամեն յեղափոխական մարմնոց մէջ, Միութիւն ամեն չէզոքներու այդ միացեալ մարմնոց հետ, ի մի բան Միութիւն մեր ամեն բարոյական, նիւթական և մտա-

ւոր ուժերին: Միութիւնը զօրութիւն է ըսուած է, իսկ այս պարագային մէջ հայրենասիրութիւն է նաեւ:

ԱՐՄՈԳ

Ս. Բաղաթ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՈՒՄԼԱ, 18 Մարտ

ՄԻ ԽԱՌՈՒԻՔ

«Հանրային շահ, կրթական տեսակէտներ» եւ ասոնց նման կարգ մը գիւթիչ բառեր վերջերս շատ լուրջան Շումլայէն: Այն որ Շումլայի մէջ կապրի եւ մօտէն տեղեակ է թէ՛ ի՞նչ բանի մէջ կը կայանայ «հանրային շահ» եւ կրթական տեսակէտով» հրապարակ նետուող կարգ մը ողորմելիներու գործունէութիւնը, չպիտի խաբուի անոնց այս անհիմն խօսքերուն: Սակայն ամեն անոնք, որոնք հեռի Շումլայէն եւ միանգամայն անտեղեակ այդ կրթաւէր պարոններու անցեալին ու ներկային, կարգաւորով անոնց գործիւնները. պահ մը թեւեւ հաւատք ընծայեն անոնց ուսուցիչ խօսքերուն:

Ծիչդ է, Շումլայի հասարակական գործերը անցեալէն աւելի նախանձելի վիճակ մը ունին, բայց խնդիր է գիտնալ թէ՛ այդ յառաջադիմութիւնը որոնց շնորհիւ կատարուած է, եւ որոնք են Շումլայի մէջ հանրային եւ կրթական գործերու համար աշխատողները, իսկ որոնք կրթական հաստատութիւններու յառաջդիմութեան առջեւ խոչընդոտներ յարուցանող ցեղերը:

Առնենք Շումլայի կրթական հաստատութիւններէն միայն հայկական ընթերցարանը եւ տեսնենք թէ՛ այսօր ինքզինքնին կրթաւէր անուանող այդ մեծապատիւները, ի՞նչպիսի վերաբերում ունեցած են դէպի այդ կրթական հաստատութիւնը:

Մէկ քանի տարիներէ ի վեր արդէն Հայկական ազգային Ընթերցարան մը գոյութիւն ունէր Շումլայի մէջ, որը վերջերս կարող եւ ժրաշան վարիչներու ղեկավարութեամբ աւելի նախանձելի վիճակի մը հասաւ, այնպէս որ

աւելորդ չենք համարիր հարցնել, կրթականի եւ հանրային շահու պաշտպան ու նախանձախնդիր այդ երիտասարդներուն թէ՛ ինչո՞ւ համար, արդէն գոյութիւն ունեցող կրթական հաստատութիւն մը աւելի առաջ տանելու համար չէին ուղեր ոչ միայն աշխատիլ, այլ ցոյցի համար բաժանորդ կը գորուէին եւ սակայն բնաւ չվճարելով ուրիշներու ալ դայթակղութեան պատճառ կը դառնային:

Մենք կը հարցնենք, «ժողովրդեան մէջ համերաշխութեան, եղբայրութեան կապեր հաստատելու» ձգտող այդ խաղաղասէր երիտասարդներուն թէ՛ Շումլայի նման փոքրիկ հայ գաղութի մը մէջ, երբ արդէն գոյութիւն ունի Հայկական Ընթերցարան մը, անձնական եւ կուսակցական ճգնի՞մ հաշիւներէ առաջնորդուելով, որիչ մը բանալ եւ ժողովրդին մէջ պառակտում ձգելը, հանրային շահերու ո՞ր «տեսակէտին» կը վերաբերի, համերաշխութիւն հաստատելու ո՞ր «տնօրինութեան» կը պատկանի:

Այդ խաղաղասէր պարոնները, պէտք է նախատեսին որ ժողովուրդը իրենց չար կիրքերուն չպիտի կրնային ծառայեցնել, եւ եթէ յամառէին իրենց եւր առաջ քշելու մէջ, նախ վարչութեանէն դուրս պիտի ձգուէին եւ յետոյ ալ ընթերցարանէն, նոյնիսկ կանոնադրութեան տրամադրութիւններու համաձայն:

Եթէ անոնց նպատակը «յեղափոխութեան օգնել» էր, ի՞նչ հարկ կար պարտքի տակ մոռնել, հարիւրաւոր ֆրանքներ ծախսելով մասնաւոր գլխաւք բանալ, եւ յետոյ այդ ծախքերը գոցելու համար «հանրային շահ» եւ կրթական տեսակէտներ մէջտեղ նետելով, զիմիկ ժողովուրդին եւ ձեռք կարկառել հանգանակութեան անոռն տակ:

Շումլայի նիւթական վիճակը անձուկ ըլլալով հանդերձ, եթէ չմոթեր իրեն գիմոյները, բայց անխղճութիւն չէ՞, անոր բարի տրամադրութիւնները չարաշար գործածել եւ տրուած գրամները անխորհուրդ կերպով վատնել: Ասիկա ի՞նչ տեսակ յեղափոխական գործունէութիւն է, միթէ «յեղափոխութեան մղում» տալը արտասահմանի մէջ, այս կամ այն անհատի խաբուել չէնք: Իրողութեւնը զարդարելու մէջ կը կայանայ:

Ահա ընթերցող, անմահ Պետոպոլկարացիի անունը շահագործող եւ

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ (5)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՌԷՈ ՄԵԼԻՔ

Դուրս բացուեցաւ: Ներս մտան ծերունի մարդ մը, որ վաթսուոր մօտ տարիքով, միջահասակ, ցորենաթոյր գիմագծերով, կնճռալից ճակատով, վշտաբեկ նայուածքով բարեմիտ մէկն էր եւ մանկամարդ աղջիկ մը, հագու տասնեակի տարու, բարձրահասակ, գեղանի ու գրաւիչ կերպարանքով:

Մանկամարդ աղջիկը հագած էր չիթէ զպուն մը, չուխայ կօճիկ մը, բացկարմիր գունով գոգնոց մը եւ գլուխը դրած էր աղուոր գտակ մը:

Երկուքն ալ դողդալով կեցան պատին տակ:

— Աղջիկ Մարօ, ո՞ր կողմեր տարին քեզ, հարցուց Ռէս Մէլիք հայրական անուշ խանդավառանքով մը:

Թշուառ աղջիկը սարսուռաց, տգիտնեցաւ եւ գլուխը կտրճեցի վրայ կախեց վերաւորուած թռչունի մը պէս:

— Դուք ըսէ՛, Միքայիլ տատօ՛, նկատել տուաւ Տէր Օհան՝ վշտով մը համակուած:

— Ի՞նչ տատ, Տէր Օհան, Աստուած իմ մեղքը տփեց երեսիս, մրմնջեց Միքայիլ Տատօ, մորմորուած ձայնով մը: Ա՛խ, երկու ամիս Պէկի մը քով մնացեր է... վերջը շատ լացեր, շատ պաղատներ է Պէկին... բայց ձէնը լսող մը չէ եղբր... էլ ճարը կտրած էս շունին կամքը կատարեր է որ կրցած է աղատիլ...

— Գիտէ՞ որ կողմ երթալը, հարցուց Ռէս Մէլիք:

— Ձէ՛, Ռէս աղա՛, աչքերը գոց տարած են, պատասխանեց Միքայիլ Տատօ արցունքները սրբելով: Ես խրկելու ժամանակ, նորէն աչքերը գոցեր են:

— Բաւական է... ընդհատեց Ռէս Մէլիք փղծկած ձայնով մը:

Ու պատուիրեց Միքայիլ Տատօյին որ ամենուրեւն չյայտնէ եղելութիւնը:

Հայրն ու աղջիկը գուրս ելան:

— Թշուառ աղջիկ՛... մրմնջեց վանականը, այնպիսի՛ խելացի ողջ ձայնով մը որ կը դողար: Կը տեսնէ՞ք, այս երկրին մէջ ո՞վ կարող է իր պատիւը պաշտպանել, ո՞վ կարող է կեանքի ապահովութիւն ունենալ... կառավարութիւնը գողերու, աւազակներու, եղեռնագործներու եւ չարագործներու մեղսակիցն է: Կառավարութիւնն է՝ թելադրողը, կառավարութիւնն է զանոնց պաշտպանողը, միանգամայն անոնց աջակից եղողը: Եւ ասիկա հիմակ չէ, այլ հինգ դարերէ ի վեր գործադրուած անգթութիւնն է, մէկ խօսքով՝ մեր գերի վիճակին վրայ ծանրացած դրութիւնն է:

— Իրա՛ւ է, զաւա՛կս, վրայ բերաւ Տէր Օհան: Բայց Աստուած օր մը կը գթայ մեր վրայ:

— Գիտութիւնը միմիայն անկեա

մարդու կը վայելէ, Տէր Հայր, ընդհատեց վանականն ճշուած շնչով մը, ո՛չ թէ այն արի ժողովուրդին, որ պատմութեանց մէջ մեծ դեր ու մեծ անուն մը ունեցած է:

— Երբոր մենք չենք զգար, մէկ խօսքով՝ մեր վիճակին վրայ չենք գթար, յարեց Ռէս Մէլիք, ինչպէ՞ս կուզենք որ Աստուած գթայ եւ մեզ ազատէ...:

Ոստակցութիւնը բաւական տեւեց: Վանականին գաղափարները զանոնք զիւթած ու յափշտակած էին:

Թշուառ Մարօյի վրէժը խորին վէրք մը բացած էր ամենուրեւ սրտին մէջ: Վանականն՝ այդ վէրքը կարկնոտէր, կը ճղմէր որ աւելի լայնացար:

Այսպէս, վանականը շուրջ շաբաթի մը չափ Ռէս Մէլիքին տունը մնալէն ետքը, յաջողած էր մանկամարդ Մարօյէն քանի՛ մը կարեւոր ապացոյցներ առնել ու՝ առանց ո՛ր եւ է բան մը յայտնելու, մեկնիլ:

Շուկայի «հանրային շահու եւ կրթական տեսակէտով» ականջ խլացնող ձախիկներու ներկայ գործունէութիւնը մեր պարտքն է զգուշացնել Մի խաբուիք:

Գաղափարական

Ֆիւլիպի, 15 Մարտ

Յայտնի է թէ Պուլկարիոյ Այցելու Հովիւը տարիէ մը ի վեր է որ հրաժարական կը զրկէ Պատրիարքին իր ծերութիւնը եւ հիւանդութիւնը պատճառ բերելով: Եւ արգարեւ ալ ծերութիւնը ընկճած էր զինքը, մանաւանդ վերջին տարիներ, երբ զէպք մը վրայ հասնելով, աւելի ազդեց վրան: Նոր թագ. Սարգիսի ընտրութիւն պիտի ըլլար, ընտրողական ժողով կազմուեցաւ եւ ընտրողներու ցանկը կախուեցաւ եկեղեցւոյ փակը: Քանի մը երիտասարդներ իրենց անունը ցանկին մէջ չի տեսնելով, խմբով կերթան վարդապետին սենեակը եւ կը պահանջեն որ իրենց անուններն ալ արձանագրուին, եւ ընտրութեան մասնակցիլ կուզեն, այսպիսի երիտասարդներ ալ որոնք 21 տարին աւարտած են եւ զինուորութիւն ըրած: Քանի որ իրենց տրամաբանութեամբ, երկրին օրէնքը կը ներէ 21 տարին լրացնողներուն քուէ տալ, օրինակ երեսփոխանական եւ քաղաքապետութեան ընտրութեանց մէջ: Մինչդեռ մեր գիտցածը տարիներէ ի վեր թագ. Սարգիսի կընտրուի մեր սահմանադրութեան զրուծեամբ եւ 25 տարին լրացնողներն միայն կրնան քուէ տալ:

Ինչ եւ է, այս պարունները գոհացում չի կրնալով գտնել եւ ծերութիւնը մը նկատմամբ ոչ վայել ընթացք մը ըրունելով՝ կելլան կերթան: Իրենց մէջէն աւելի տաքելու երկու երիտասարդներ, Վիլիս Մեսրոպեան եւ Կարապետ Մինասեան, ընտրողներու ցանկը կը պատեն: Ընտրողական ժողովը ասիկա իրեն անարգանք սեպելով, կը հրաժարի եւ ընտրութեան գործը որ հաջիւ յաջողելու երեւոյթ առած էր, մէկէն ջուրը կիյնայ, դարձեալ անստուգութեան մէջ ձգելով Ազգ. գործերը: Ահա այս դէպքերը ծանր տպաւորութիւն թողուցին Այցելու Հովիւին վրայ: Այժմ իր սենեակին մէջ առանձնացած ապուլութեան վիճակի մէջ ինկած, ոչ մարդ կը ճանչնայ, ոչ եղած հարցումներուն կրնայ պատասխանել: Կը խոր-

հուի զինքը Պուլիս զրկել: Պատրիարքը եղած այնքան դիմումներուն խուլ մընաց:

...

Եկեղեցւոյն եւ դպրոցին վիճակը բարձրացնելու եւ պաշտօնեաներուն ամսականները վճարելու համար գովելի շարժում մը կերելի այժմ տեղւոյս ջոջ աղաներուն մէջ: Պարահանդէս մը եւ թատերական ներկայացում մը արուած էր ասկէ առաջ ի նպատակ Ազգ. վարժարանաց, եւ 200) ֆր. ի մօտ գումար մը գոյացած էր: Մարտ 23ին կրկին ներկայացում մը պիտի տրուի նոյն նպատակով: Յաջողութիւն կարգադիր մասնախմբի անգամ ներուն:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարիոյ Այցելու Հովիւ Տ. Բարթոլոմէոս Դ. Վ. Պաղճեանի ծանրապէս հիւանդ ըլլալուն պատճառաւ հրաժարականը ընդունուած է:

Պատրիարքարանի խառն ժողովը իր անցեալ նիստին մէջ Ռուսական Պուլկարիոյ համար Այցելու Հովիւ մը նշանակելու խնդրով զբաղեցաւ: Այս պաշտօնին յարմար կը դատեն երեք եպիսկոպոսներ, Երուսաղէմի միաբան Տ. Մամբրէ, Տ. Հմայիակ Դիմաքսեան եւ Տ. Մաղաքիա Տէրունեան սրբազանները. բայց խառն ժողովը իր անցեալ ուրբաթ օրուան նիստին այս մասին վերջնական որոշման մը չի կրցաւ յանգիլ:

— Նիքոքորի մէջ պուլկար ծեսով երկրորդ անգամ ամուսնացող խաչիկի խնդիրը ու այդ մասին զբոլուած տեղեկագիրները խառն ժողովը նկատողութեան առնելով, որոշեց Պուլկարաց Գեր. Էքզարքին դիմել պաշտօնապէս եւ առաջարկել որ պէտք եղած միջոցները ձեռք առնէ, որպէս զի հայերուն ըստ քմաց երկրորդ անգամ ամուսնանալ չի թողատրուի:

— Գաւառական պաշտօններէ խոյս տուող եկեղեցականներուն Պուլսոյ մէջ բնաւ պաշտօն չը տալու որոշումը կրկնուեցաւ վարչական վերջին ժողովին մէջ: Բայց գործադրութիւն...

— Սիսի կաթողիկոսական Տեղապահ Տ. Կիրակոս եպիսկոպոս հեռագրով մը երկրորդ անգամ խնդրած է Պատրիարքարանէ որ Կիլիկիոյ կաթողիկոսութեան համար առաւելագոյն քուէ շահող Տ. Սահակ Եպսկ. խապանանը վաւերացուի իբր կաթողիկոս. որովհետեւ, կրսէ Ս. Տեղապահը, Կիլիկիոյ վիճակը անմիջական եւ անհրաժեշտ պէտք ունի հովուապետի մը ներկայութեանը: Ժողովը կրկին խորհրդակցութիւններէ վերջ ապօրինի եւ ազգային իրաւաստութեանց անհամապատասխան գտաւ Կիրակոս Սրբազանի առաջարկը, եւ որոշեց փութացնել Տ. Յակոբ Աշոտ Եպիսկոպոսի ճամբորդութիւնը դէպի Կիլիկիա, իբր պատուիրակ Պատրիարքարանի, կատարուելիք նոր ընտրութեան համար: Կը կարծուի թէ Ն. Մըրբազնութիւնը Զատիկ տօններէն առաջ Ատանա հասնի. արդէն արտօնագիրը դատական նախարարութիւնէն հրաժարուած ու նախարարաց խորհուրդին վաւերացման ենթարկուած է:

— Տ. Սահակ եւ Տ. Արիստակէս վարդապետներուն եպիսկոպոսացման համար էլ միաժին ճամբորդելու արտօնագիրը կառավարութենէն Պատրիարքարան յանձնուած է:

— Լօտարայէ մեկ զրկուած նաւակ մը կը հաստատէ այն լուրը թէ Հին եւ Վեր. Հնչակեան կուսակցութեանց կեդրոնները միացած են:

— Բաղէշի Պաս գիւղէն Ներսէս Գալուստեանի դիմումին վրայ, թէ իր կինը անհաւատարիմ է, վեհ. կաթողիկոսը արտօնութիւն տուած է Կրօն. Ժողովին Երկրորդ անգամ

ամուսնանալու հրաման տալ յիշեալ Ներսէսին: Կրօն. Ժողովը նկատելով թէ այդ պատճառ եղած է իր կնոյ ապօրէն ընթացքի անձնատուր ըլլալուն, որոշած է Ներսէսին ժամանակ մը ապաշխարութեան միջոց տալ ու յետոյ անոր կրկնամուսնութիւնը կատարել:

— Հայաստանէ Ռուսաստան գաղթող հայերը Մարտ 12ին Տփղիսի ոստիկանատունը կանչուելով առնեց անունը մականունը ու բնակավայրը արձանագրուեցան. եւ ըստ բարձրագոյն հրամանի, ծանուցուեցաւ թէ, երկու շաբթուան մէջ եթէ չը ձգեն Կովկասը ու չը հեռանան թիւրքիա կամ ուրիշ տեղ, ռուսական հպատակ պիտի լինին, եւ այս պարագային իրենց հաւատարիմ հպատակութեանը համար պիտի երդնուն ու յետոյ կովկաս կամ Ռուսիոյ մէկ ուրիշ կողմը բնակավայր պիտի ընտրեն, տուրք պիտի վճարեն ու զինուորական ծառայութեան ենթարկուին:

— Մասնիչ վարժապետի արտաքսման համար հանրագրութիւն մը ստորագրող 81 ազգայիններէ ոմանք կը ցաւինք որ կարեւորութիւն տուած են ծանօթ վաշխառու թաղականի մը ըստին թէ «անոնք խռովայող եւ անկարեւոր մարդիկ են»: Մինչդեռ ամբողջ Վառնան գիտէ թէ ատոնցմէ շատերը պարկեշտ ու պարտաճանաչ հայեր են, որոնք Ազգ. արժանապատուութեան նախանձախնդիր ոգւով միայն ստորագրած էին այդ հանրագրութիւնը: Մասնիչ մը պաշտպանել ջանացող վաշխառուներն են որ ազգային արժանապատուութիւնը ստէպ սուի մը հետ կը փոխեն:

ԻՐԱՆԻԱՆԷՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Վարդոյիս. — Երկու շաբաթ առաջ Պ. Զարպանէլեանի միջոցաւ մեր քեզ յանձնած 15 ֆրանքին ընկալագիրը ցարդ չէք տուած: Փութացեք թէ՛ այն եւ թէ՛ Պուլկարէն եկած 6 ֆրանքին ընկալագիրը զրկել մեզ:

ՄԻՐԶԱ-ՊԷՏ ԻՐ

ՀԱՐԵՄԻՆ ՄԷՁ...

Վանայ ընդարձակ նահանգին հիւսիսակողմը, գրեթէ հիւսուղաց ու բարձրաբերձ անտառներով չրջապատուած լեռնաձորի մը մէջ, փոքրիկ ու սիրուն գիւղ մը կայ, որ կը բնակէր Միրզա-Ալի անունով հարուստ ու ազդեցիկ քուրտ մը:

Այս քուրտ պէկը՝ բոլորովին ազատ ըլլալով թուրք կառավարութեան լուծէն, ինքնիշխան մը դարձած էր իր իրաւաստութեան տակ գտնուող բոլոր սահմաններու մէջ: Իր ազատամտին պատմութիւնը քուրտ աշխիւթներու ամենէն փայլուն եւ ամենէն փառաւոր պատմութիւնն էր:

Հազիւ յիսունի մօտ, պարթեւ հասակով, թիկնեղ, վէս ու ծանր կերպարանքով, բարձրահասակ ու գեղադէմ էր: Տունին միակ շառաւիղն ըլլալով, աւելի՛ գուրգուրանքով եւ աւելի՛ փափուկ կերպով մեծցած էր: Փոխանակ լեռնային կեանքի մը տա-

լու ինքզինքը, աւելի՛ հաճոյքներու, աւելի՛ մոլութեանց ետեւէ եղաւ մանկութենէն սկսեալ: Կեանքաւոր իր ցոյգակեաց կեանքին սովորութիւններն այնքան աղետաւոր դարձան, որ տեսած կ'իյնէր, տեսած աղջիկը, գրեթէ աչքին դարձեալ ամեն յանկուցիչ առարկան՝ անմիջապէս կուղէր ձեռք բերել... Ինչ կերպով որ կարելի ըլլար նպատակին հասնիլ: Ու մանաւանդ, հակառակ քուրտ աշխիւթներու մէջ դարեւ ի վեր սրբութիւն ու բարձրագոյնականութիւն համարուած սովորութեանց, Միրզա-Ալի իր ոչ-ցեղականներու վրայ գէշ աչքով չէր նայեր... Փլալի մը աղջիկը սիրելով՝ նուազապէս իր հարսին մէջ տարիներով կը թօշնէին Հայ, Թուրք եւ Ասորի աղջիկներ, որոնք գաղտնաբար կը բերուէին ու կը պահուէին կանանոցը:

Օր մը, վերջապէս ատեն, երբոր Միրզա-Ալի իր սեղանըին մէջ նստած նարկիլէ կը քաշէր, Դրանիկներէն մին ներս մտաւ ու իմացուց թէ Ալի-Պէկ անունով երիտասարդ քուրտ մը

զինքը տեսնել կուզէ:

— Վա՛յ... ուրեմն ըսէ թո՛ղ հոս դայ, հրամայեց Միրզա-Ալի հետաքրքրութեամբ մը:

Դրանիկը գուրտ ելաւ:

Միրզա-Ալի գուրտ յառած իր մեծ ու խոր աչքերը սպասեց:

Ինչ յետոյ ներս մտաւ Դրանիկին ըսած Ալի-Պէկը, որ հազիւ քսանութը տարու, բարձրահասակ, համակրելի ու ազնուականի կերպարանքով երիտասարդ մըն էր: Հազած էր Ռշտունցիներու յատուկ ջուռ ու կարճկեկ գաղախիկը, որուն թեւերը լայն ու սերուն վրայ կը վերջանային: Կագած էր շալվար մը՝ ձիւնի սպիտակութեամբ ու նաշխուս հիւսուածքով, գլուխը դրած էր թխագոյն քօթով մը՝ որուն շուրջը բոլորուած էին կարմիր ասպիկն ու մետաքսայեւ սեւ փոշին: Իսկ հմայեց գաղախիկին տակէն հագած էր ոսկեճամուկ կոճակներով լիլիկ մը, որուն կէս մը քաջուածքէն թրթռալով կերեւար սրմայ բանուածքով նաշխուս շապիկը:

Միրզա-Ալի այս բոլորը դիտեց ա-

կընթարթի մը մէջ ու համողեցաւ թէ եկող հիւրը բարձր գերդաստանի մը զաւակն էր: Կեանքաւոր ջուր բերել տուաւ, արծաթեայ կոնքի մը մէջ անոր ոտքերը լուաց եւ ոսկիի դրուագներով զարդարուած նարկիլէ մըն ալ հրամցուց:

Ալի-Պէկ ներդաշնակ ու յանկուցիչ ձայնով մը չնորհակալութիւնը յայտնելով, նկատել տուաւ որ նարկիլէ գործածելու սովորութիւն չունէր:

— Ա՛խ, բարեկամս, ի՞նչ ընեմ ուրեմն... առարկեց Միրզա-Ալի բոլորովին զարմացած: Ի՞նչ բանի կը փափաքես ըսէ՛, տունը քուկդ է:

— Երախտապարտեմ, Միրզա-Ալի, մրմնջեց երիտասարդ քուրքը: Բնա՛ւ մի՛ նեղուիք իմ մասիս: Մի՛թէ բարեկամութիւն ըսածդ պատիւներով կ'ըլլայ:

— Իրա՛ւ էք... բայց շատ յոգնած ըլլալու էք:

— Ամենեւին: Երիտասարդ մը այնքան շուտ չ'յոգնիր:

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍՍԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐՖԻՍ

Սթանպոլտան Մարտ 31 թա-
րիկէ քէշիտէ օլընան թէլէկրաֆի-
նազարէն, ժընէվտէ թէլէկրաֆի-
մուգարէր օլան էվրոպաաաքի
էրմէնի մէքթէպլիէրին Գօնիլէ-
սինի մէնն իթտիրմէք իշին, Պոպը
Ալի Բարիս օսմանլը էշինսինէ վէ
ժընէվ գօնսօլսընա թալիմաթ վէ.
րուպ, պու պապտէ հէր նէվ թէտ
պիլիէրէ միւրաճաաթ իթմէլէրինի
էմր իթմիշ տիր:

Ֆազաթ ժընէվտէն մաէլ մէմ
նունիէ գապուլ օլընան Ապրիլ 1
թարիկի թէլէկրաֆի մէքթէր
Գօնիլէնին պիլա միւրաճաաթ ա.
շըլմըշ օլտըղընր պիլտիրիլի-
յօր:

— Մարտ 25տէն 28է գաաաթ
Մէքթէտէ գօրէլաաան 624 վէ
Ճիտտէտէ 24 քիշի էօլմիշ օլ-
տըղը Սթանպոլտան պիլտիրիլի-
յօր:

Քէզա Մըսըրտան պիլտիրիլտի-
կինէ պինտէն, սօն հաֆիտա գոր-
ֆընտա, Հիճազ վիլայէթի տախի.
լինտէ՝ գօրէլաաան 1127 քիշի էօլ-
միշ, Հաճըլար իլէ պէրապէր խա-
թալըզ Մըսըրա Եաեղլաճաաը ի-
շին թէտապիլի լաղմէ իթթի-
խաղ օլընմըշ տըր:

— Ենմէն վիլայէթինէ սինօրտաշ
օլուպտէ ինկիլէրանըն հիմայէսի
ու թէէսիրի ալթընտա պուլընան
էյալէթիէրին թիւրքիա իլէ սի-
նօրլաընը թէթըրիզ ու թային
իթմէք իշին, թիւրք վէ ինկիլիզ
մէմուրլաընան միւթէշէթիլ գօմի-
սիօն միւնաղաաաան տօլայը թա-
թիլի մասլահաթ իթմիշ տիր:
Գօմիսիօնըն թիւրք աղալարը ին-
կիլիզէրին թիւրք թօրաղընը
գապթա չաղըճալաընտան տօլայը
բօթէսթ իթտիլէրինի Ենմէն
վալիսի պիլտիրմիշ տիր:

— Պունտան էվվէլ Սթանպոլ
թէլէկրաֆիլաըն վէ էվրոպա կա.
զէթալաըն վէրմիշ օլտըղլաըն
մալիմաթ իւզրէ, րուս էլիսի Մ.
Ջինօվիէվին Մալիգոնիա վէ էր-
մէնիտան իշին Պապը Ալիյէ շէ-
տիտ լիսանլէ միւրաճաաթլար իթ-
միշ օլտըղընը վէ պու պապտէ
Եննի պիր պէյաննամէ հաղըրա-
տըղընը վէ քէզա՝ էկէր իթթիշա-
շըն էօնիւ ալը՝մաղ վէ իսլահաթ
իճրա օլընմաղ իսէ Մալիէթոնիայը
Աստորիա վէ էրմէնիտանը րու-
սիա իշլօլ իտէճէկլէրինի էլիսին
իլթար էլլէմէսի էսասսըղ օլտը-
ղընը Սթանպոլտան Ապրիլ պիր
թարիկի թէլէկրաֆի պիլտիրմէք-
տէ իսէտէ, Մ. Ջինօվիէվին նա-
աաաթ հօլլու Պապը Ալիյէ՝ իթ-
թիլալը գաղըմալը թէտիպ ու
թէսքին վէ սիւքիւնէթիլ էհալիի
մուհաֆազա իթմէսիին թասվիյէ
պիրլէ, Աստորիա վէ րուսիա տէվ-
լէթիէրին Մալիէթոնիաա գաղը-
ղըղը իսթէմէտիլէրինի պէյան

էլլէմիշ օլտըղընը մէքթէր թէլէ-
կրաֆի իսլալէթէն պիլտիրիլի-
յօր:

— Սթանպոլտան Պէրլիմէր թա-
կէպըլաաա սուրէթի ալթիլտէ
մալիմաթ վէրիմիշ տիր:

«Սուլթանըն պիրաաէրի Բէշաա է-
ֆէնսի էօլմիշ տիր, անրն իսասթա-
լըղը տուլուլաաը. միւթէվէֆա 58
Եաշընտա օլուպ, Համիտտէն սօնրա
թալիսա ճալիս օլմազ հաղընա հայիզ
իսի: Բէշաա էֆէնտիլին վէֆաթը
Սթանպոլտա պէօյիլ քէշէճան հասըլ
իթտի: զիրա անրն էօլմէսի իլէ վէ-
լիսաղըզ իտաաաընտա պուլընանլար
միւթէտաթ օլուպ, բասիշա՝ օլմազ
իշին միւնաղաալար վէ էնթիլալար
գուհուր իտէճէք տիր: Թիւրքլէրին
սէրպէստիլէթ ֆըրգաաը Անմէա Բէմա-
լէտտին էֆէնսի թարաֆ թուլմազ-
աա տըրլար: զիրա պու բընն գա-
նունը էսասի թարաֆաաը աաա, օ-
լընըլօր: վէ սահիէն Համիտտէն սօն-
րա Մուրաաա ճիւլուս իթմէք իսթէմէզ
իսէ՝ Անմէա Բէմալէտտին բասիշա՝
օլմաաը շէրան լաղըմ կէլիլ վէ ժէօն
թիւրքլէր արգուլաընա տէսթէրէս
օլուրլար: Անմէա Բէմալէտտին էֆէնսի
էլիէվմ 55 Եաշընտա օլուպ, քէմալէթ
ու տիրալէթի իլէ չօղլարըն հիւսի
իլէվէսիլէնին քէնտիսինէ ճէլլ իթ-
միշ պիր բընն տիր:»

— ԱԼՊԱՆԻԱ — Նիմ րէմի
թարիկա կաղէթաաը Շքօրաաան
ալթիլտէթի մալիմաթը ալմըշ տըր:

«Ալպանիաա հիւքիւմէթ հօզ
կիպի պիր հալլ հիւքմ իթմէքտէ
տիր: Միլիտիլէր բիւր սիլահ շէ-
թէլէր իլէ էյալէթին հէր թարա-
ֆընը կէզուպ խարապ իթմէքտէ
տիրլէր: պա խուսուս Շքօրաա վէ
Բըրդընէ հօլլար իւզէրինտէ, Պիր
գալ կիւնտէն պէրու թէլէկրաֆի
թէլլէրի քէսմիշլէր տիր: օնլարա
գաղընը կէօնտէրիլմիշ օլան պիր
ալայ աաքէր Արնապուլաըն էլիսնէ
Ենսիլ տիւշտիւ:

«Հիւքիւմէթ իսթիլալըլար իլէ
պաշա չըզմաաղընտան, Ենսիլ
տիւշէն աաքէրլէրի գուրթարմազ
իշին մէճպուր օլտը տիլէր թա-
պուրլարը կէրիլ շէքմէյէ:

«Շէհիլէր իշէրիսինտէ էմի-
լէթսիլիզ կիւն պէ կիւն ալթ-
մազաա տըր: Բէք չօզ հայաաա-
լըզլար վէ ճիւլայէթիլ իճրա օլըն-
մազաա տըր: Իքի կիւն էվվէլ
պիր արնալի տ Շքօրաա շէհիլ-
նին սօգաղը իշինտէ, կիւնտիւզին
թիւֆէկիլիլ շէքուպ Բիւքալը Մըս-
թաֆայը էօլտիւրտիւ, Եանհա
քէօլլէրինտէ հալ տաշա թէհիլ-
քէլի տիր: վալի Օսման բուշանըն
թաարուղաթը Արնապուլաըն ին-
թիլգաա ալմայա թաշիլիզ իթմիշ
օլտու:

«Իլաննամէլէր իլէ էհալիլ ըսեա-
նա վէ վալիսին քէլլէսինի տալէթ
իտէյօրլար:

«Պէրաթաա վէ Բարաթիլթտէ
տախի իսթիլալ ալթմըշտըր:
շէհիլն սօգաղաընտա պիլէ մու-
հարէպէլէր վուգու պուլմայա
պաշաաըշ տըր:»

ՏՈՒՆԻՍԻԱ

Վիւքէլա բէյիսի Մ. Տանէվին
Բէթրապուրկա Ենթիլմիշ օլտըղընը
Եաղմըշ լաղը, Միւսալիէյ՝ խա-

րիճիլէ նաղըրը Գօնթ Հաճաաթիլ
զիյարէթտէն սօնրա տիլէր նա-
ղըրլարը տախի զիյարէթ իթմիշ
վէ արիզ ու ալթիզ կէօնիշմիշ օլ-
տըղընը թէլէկրաֆի պիլտիրիլի-
յօր:

Քէզա, Մարտ 31տէ Մ. Տա-
նէվին Չարըն հուլուրիլի գապուլ
օլտըղընը Բէթրապուրկաաան պա-
թէլէկրաֆի պիլտիրիլի-յօր:

— Մալիէթէնիո գօմիթէսինի
ալթիլաթընր մէնն իթմէք իշին
Սօֆիաաաթ րուս վէ Աստորիա
գօնսօլսընր Մ. Տանէվէ իթ-
միշ օլտըղլարը միւրաճաաթ ի-
սանէն օլտըղը կիպի, Պուլկարիա
Միլիտիլէր տախի իսանէն ճէ-
վապ վէրուպ Պուլկարիա տախի-
լիստէն Մալիէթոնիայա շէթէլէր
կէշմէսինէ մէյտան վէրմէք իշին
հիւքիւմէթ էլիստէն կէլէնի իճրա
րթմէյէ հաղըր պուլընտըղընը
պիլտիրմիշ տիր:

ԲՈՒՍԻԱ

Միւրալայ կիրմին խրլանէթիլի-
կինի մէյտան չըգաաուն պիր
գաաաըն րէսմի օլմուշ տըր: Մէր-
գուս հարպիլէ բալիլարըն պիր
գաաաընալթըրապ Պէրլիլէն հօլլար
ըմըշ, օրաաա բլանլարըն ֆօթօ-
կրաֆը ալընտըգաաան սօնրա, թէք
րաը մէզպուրէ գաաաըն 3-4 կիւն
գաղընտա անլէրի միւրալայ կիրմի
կէթիլուպ թէսլիմ իտէր իմիշ:

Սօն տէֆա մէզպուրէ գաաաըն
բալիլարըն րէսմիի ալան Պէրլիլն-
տէքի ֆօթօկրաֆըրա քէնտի ֆօ-
թօկրաֆընը տախի պէօյիլաաթիւ
ալմաղլէ, գապիլէ ֆօրմասընտա
քիւշիկ ֆօթօկրաֆընը բալիլարըն
բաքէթի իշինտէ ունուլմըշ տը:
Իշթէ մէքթէր բաքէթի կիրմ
ալմազաղըն հաղըրաանէյէ գօր:
վարալիա օրտուսընըն էրքիանը
հարապ բէյիսի ժէնէրալ Հէրլէման՝
պիր կիւն պէրաի մասլահաթ մէզ-
քիւր բաքէթի ալմազաղընտա՝ իշինտէ
պիր գաաաըն ֆօթօկրաֆը պուլուր:
շիւքէնէլէրէք պու գաաաընըն խա-
նէսի հօղլանըր, օրաաա Պէր-
լիլտէ պէօյիլաաթիւմիշ օլան ֆօ-
թօկրաֆ պուլընըր, վէ իշ մէյ-
տան չըգաաըն:

ԻՆԿԻԼԻԹԻՐԱ

Թրանսպալ մուհարէպէսինիա-
չըլմասընա էն պէօյիլ քէպէպ օ-
լան միլիտինտ Սէսիլ րօտըս էօլ-
միւշ տիր: Միւթէվէֆա 400 մի.
լիսի ֆրանք սէրվէթիլի՝ ինկիլիզ
միւսթէմէլէպալընտա մէքթէպլէր
թէսիսինէ թալիսիս վէ վալիլէթ
իթմիշ տիր:

— Սուլհ միւզէքէրէսի իշին
գօմանտան Շալքալիլիլին Օրանժ
ճուհուրիլէթ բէյիսի Շթէյն իլէ
միւզէքէրաթը շիմտիլէ գաաաթ
նէթիճէսիլզ գալմըշ տըր:

ՄԻԻԹԵՆԵՎԻՅԷ

Հիւնտիստանըն Բէնճապ էլտլէ-
թիլտէ պիր ալ գաղընտա հու-
մուրճազ իլլէթիլտէն 70000 քիշի
էօլմիշ օլտըղընը վէ չու միւսհիշ
խասթալըղըն Եանըլմաաաըն իշին

թէտպիրլէր ալընտըղընը Սիւլա-
տան պիլտիրիլի-յօր տիր:

— Սերպիաաա իսթիլալ չը-
գաաաթ թէտպիրիլտէ պուլընուպ
տէ գալթ օլընմըշ օլան Ալալսին-
թիլին պիրաաթիլի տլէհիլէ Իգալմէ
օրնան տալաաան գաղմըշ րաթ
իսէտէ վիլնաաա թուլթուլուշ
տըր:

— Աճէմ Շահը Եննիտէն էվրո-
պալ զիյարէթ իթմէք գաաաթընտա
պուլընուպ, Մալիս 12տէ Գյա-
զօվիլէ Ենթիլմէք վէ վիլէննա
թարիլիլ իլէ վէնէտիլէ կիտէճէք
տիր: օրաաա 20 կիւն գալտըզ-
տան սօնրա րօմա, Միլան,
Ֆրանգֆօրթ, Պէրլին, Լօնտօն վէ
Անվէրա շէհիլլէրինի կէզուպ,
Գաղընպաաա կիտէճէք վէ ալմէ-
թիլտէ 20 կիւն գաաաթ րուսիա-
աա գալաճազ տըր:

— Եունանիստանտա իշտիլիք
վէ քէսաաթըզ հիւքմ իթմէքտէ
օլտըղը կիպի, պիր գալ սէնէտէն
պէրու պապլար տախի մահաուլ
վէրմէտիլիլտէն՝ էհալի ֆազոր
հալէ տիւշար օլաաազ, չօղլարըն
թէրքի վաթան իտուպ Ամերիկա-
յա հիճրէթ իթմէքտէ օլտըղլարը
Սթիսաաան պիլտիրիլի-յօր տիր:

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 23 Մարտ

ՉԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ			
Վալիս իլպ.	49.53 հքթ.	7.20/ 8.—	
Արապա իլպ.	48-58 հքթ.	8.30/10.80	
ԱՐԱՅԱ			
Վալիս 100 քիլո		10.—/10.10	
Արապա 35-45 իլպ. հքթ.		6.60/ 7.—	
ԵՈՒԼԱՅ			
Վալիս 100 քիլո		12.40/ .—	
ՅԱՍՈՒԼԻԱ 100 քիլո		12.—/20.—	
ՉԱՎՏԱՐ		7.—/7.40	
ՄԻՍԻՐ			
Արապա իլպ.	54-58 հքթ.	8.—/8.60	
Վալիս իլպ.	100 քիլո	9.80/10.20	
ՏԱՐԸ		6.20/7.—	
Կիւնտէ 40-50 արապա կէլմէք-			
տէ տիր. վալիս 5-6:			
Վալիս մուսթէլէսի ալթուս ֆը-			
րանլէ, արապա կիւմիւշլէ: Նաթ-			
լէսն 23 հիւսապը իլէ:			

ԲԱՄՈՒԲ

Վարնա մաղազաընտա իլլիք սա-		
թըլաըն:		
Ինկիլիզ իլլիկի Ն.	8-14	9.50
» » Ն.	18-24	12.—
Ենթիլ իլլիք Ն.	8-14	9.—
Աթըլմըշ բամուք հօղլա		2.—

ՍԱՐԱՅԻՅԷ

Նարոլէն 22 ֆրանք 65 սանթ.	
Օսմ. լիբաաը 23 ալթուս ֆրանք	

ՊԱՅԳԱԼԻՅԷ

Վարնա բիւսաընտա պազալիլէ		
մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալ-		
թուս ֆրանք իլէ:		
ԳԱՀՎԷ		1.50/1.70
Շէֆէր Նէմէ		51
» (Բէսմէ) սանտըզ		27.40
Բիլիլիճ ճարոն չուվալը		35-38
« Ֆիլիպէ »		32.50
« Ինկիլիզ »		25.50
« Բիզօն »		45.—
ԿԱԶ Սանտըզ		6.70
Չէթիլն ԵԱՂԸ քիլո		—, 90/—, 94
ԳՈՒՐՈՒԻ ԻԻՋԻԻՍ		—, 35

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна